ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/134

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա. Պարանյանի (լիազորագիր տրված՝ 23.06.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.06.2020թ. թիվ /26/9085-2020 գրությամբ «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 12.06.2020թ. թիվ 01/61-9849 գրության հիման վրա, 18.06.2020թ. թիվ /26/9085-2020 գրությամբ նախաձեռնել է «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկներն և դիրքորոշումը.

«Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հեկայալը.

«Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58» ծածկագրով բաց մրցույթին և ճանաչվել ընտրված մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 19.05.2020թ. «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ին ներկայացվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար պայմանագիր կնքելու առաջարկ:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար պայմանագիր կնքելու առաջարկը 19.05.2020թ. ստանալուց անմիջապես հետո «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն 20.05.2020թ. դիմել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին՝ Երևանի քաղաքապետարանի հայտարարած «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58» ծածկագրով բաց մրցույթով պայմանագրի և որակավորման ապահովման նպատակով բանկային երաշխիքներ ստանալու համար: Բանկային երաշխիքների դիմաց «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն բանկին առաջարկել է գրավադրել գույք:

Պայմանագրի կնքման նպատակով սահմանված 10 աշխատանքային օրվա ընթացքում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից բանկային երաշխիքների դիմաց գրավադրվող գույքի գնահատման ընթացքը ձգձգվել է: Վերոհիշյալ խնդրի մասին «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն տեղեկացրել է Պատվիրատուին:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 08.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ 19.05.2020թ. «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ին ներկայացվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար պայմանագիր կնքելու առաջարկ: Ընկերությունը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում՝ պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, սակայն Ընկերությունը

սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ուստի Ընկերությունը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն ս.թ. հունիսի 30-ին «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ին ուղղված ծանուցման (կցվում է) համաձայն. «Տեղեկացնում ենք Ձեզ, որ գույքի գնահատման հանձնաժողովի եզրակացության ուշացումը ամենայն հավանականությամբ կապված է եղել երկրում ստեղծված իրավիճակի՝ համաճարակի հետ: Վերոհիշյալով պայմանավորված՝ Ձեր 20.05.2020թ. դիմումի հիման վրա «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարանի հայտարարած «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58» ծածկագրով բաց մրցույթով պայմանագրի և որակավորման ապահովման նպատակով «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ին բանկային երաշխիքների քննարկման գործընթացը երկարաձգվել է»:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Ընթացակարգերի հրավերի ՄԱՍ 1-ի 10.2 կետի՝ մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնում է որակավորման ապահովում՝ շինարարական աշխատանքի գնման համար սահմանված կարգով հաստատված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված արժեքի տասը տոկոսի չափով:

Որակավորման ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով (հավելված 4), որը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրով (համաձայնագրով) ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարմանը հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:

Նույն Ընթացակարգերի հրավերի ՄԱՍ 1-ի 10.3 կետի՝ Պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երախիքի (հավելված 5) կամ կանխիկ փողի ձևով:

Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակիցը ընտրված մասնակից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով ու վերջինիս հետ կնքվող պայմանագրի ընդհանուր գինը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով՝ պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսի չափով:

Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հայտնում ենք, որ «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացվել՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58» ծածկագրով գնման ընթացակարգի հաստատված պայմանագրի օրինակը:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 08.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում՝ սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ուստի Ընկերությունը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

ՀՀ կառավարության կողմից 2020թ. մարտի 16-ին ընդունվել է թիվ 298-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին: Վերոհիշյալ որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը

ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով հայտարարվել է արտակարգ դրություն, որը երկարաձգվել է մինչև 2020թ. մայիսի 14-ը, այնուհետև համապատասխան որոշումներով այն երկարաձգվել նաև մինչև հուլիսի 14-ը, որի պարագայում երկրում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ գրեթե անհնարին է դարձել /առձեռն/ փաստաթղթաշրջանառությունը տարբեր հաստատու-թյունների հետ, դեռ ավելին, համատարած խնդիրներ առաջացել նաև ՀՀ-ում գործող բանկային երաշխիքների տրամադրման գործընթացում, որի պարագայում գրեթե 3 ամիս առաջացել են նմանատիպ խնդիրներ բոլոր մրցույթների շրջանակներում:
Ավելին՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթներում արդեն իսկ քննվել են բազմաթիվ նմանատիպ գործեր, որի պարագայում բողոքներ քննող անձի կողմից քննարկվել են ՀՀ-ում արտակարգ դրության ժամանակահատվածում՝ մասնակիցներին վերագրվող Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման դեպքերը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ մի շատ կարևոր հանգամանք.

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար պայմանագիր կնքելու առաջարկը 19.05.2020թ. ստանալուց անմիջապես հետո «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն 20.05.2020թ. դիմել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին՝ Երևանի քաղաքապետարանի հայտարարած «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58» ծածկագրով բաց մրցույթով պայմանագրի և որակավորման ապահովման նպատակով բանկային երաշխիքներ ստանալու համար: Բանկային երաշխիքների դիմաց «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն բանկին առաջարկել է գրավադրել գույք:

Պայմանագրի կնքման նպատակով սահմանված 10 աշխատանքային օրվա ընթացքում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից բանկային երաշխիքների դիմաց գրավադրվող գույքի գնահատման ընթացքը ձգձգվել է: Վերոհիշյալ խնդրի մասին «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն տեղեկացրել է Պատվիրատուին:

Այն փաստը, որ բանկային երաշխիքի տրամադրումը երկարաձգվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից բանկային երաշխիքների դիմաց գրավադրվող գույքի գնահատման ընթացքը ձգձգվելու արդյունքում ապացուցվում է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի 30.06.2020թ. ծանուցմամբ:

Վերը նշված փաստերը վկայում են, որ պայմանագրի և որակավորման ապահովման

նպատակով «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի կողմից բանկային երաշխիքների չներկայացնելը ամբողջությամբ կապված է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի և ՀՀ-ում կորոնավիրուսի հետ կապված արտակարգ իրավիճակի հետ, ուստի գտնում ենք, որ նման պայմաններում ՍՊԸ-ին չպետք է վերագրվի ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում:

Վերոհիշյալի արդյունքում Ընկերության պայմանագիր կնքելու իրավունքից զրկելը իր հերթին հանգեցրել է «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելուն և հանգեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ին չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/134 ընթացակարգի շրջանակներում 24.06.2020թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է նիստը հետաձգել՝ գործի ելքով էական նշանակություն ունեցող ապացույցներ ներկայացնելու համար:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.06.2020թ. թիվ 01/61-9849 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 09.03.2020 թվականին հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58 ծածկագրով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 90, 97, Աջափնյակ վարչական շրջանի թիվ 35 և Նոր Նորք վարչական շրջանի թիվ 112 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների գնման ընթացակարգ՝ բաղկացած չորս չափաբաժիններից:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո 19.05.2020 թվականին, Ընկերությանը ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ընկերությունը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից»:

Ամփոփելով՝ Պատվիրատուն առաջարկել է ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով, Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/134 ընթացակարգի շրջանակներում 24.06.2020թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/134 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/134 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58 ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

3. Պատվիրատուն 19.05.2020թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ ներկայացնելով պայմանագրի նախագիծը՝ խնդրելով ծանուցումը ստանալու օրվանից տաս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել կնքված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման

ապահովումները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.06.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել պայմանագրի ու որակավորման ապահովումները, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, մերժել է «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.06.2020թ. թիվ /26/9085-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 12.06.2020թ. թիվ 01/61-9849 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի գրությունը՝ կից փաստաթղթով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում,

ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58 ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

Պատվիրատուն 19.05.2020թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ ներկայացնելով պայմանագրի նախագիծը՝ խնդրելով ծանուցումը ստանալու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել կնքված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.06.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետում

չի ներկայացրել պայմանագրի ու որակավորման ապահովումները, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, մերժել է «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի հայտը:

Այսպիսով՝ Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2020/134 ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել է, որ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար պայմանագիր կնքելու առաջարկը 19.05.2020թ. ստանալուց անմիջապես հետո «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն 20.05.2020թ. դիմել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին՝ Երևանի քաղաքապետարանի հայտարարած ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58 ծածկագրով բաց մրցույթով պայմանագրի և որակավորման ապահովումների նպատակով բանկային երաշխիքներ ստանալու համար: Բանկային երաշխիքների դիմաց «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն բանկին առաջարկել է գրավադրել գույք:

Պայմանագրի կնքման նպատակով սահմանված 10 աշխատանքային օրվա ընթացքում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից բանկային երաշխիքների դիմաց գրավադրվող գույքի գնահատման ընթացքը ձգձգվել է, որի վերաբերյալ «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ն տեղեկացրել է Պատվիրատուին:

Ի հավաստումն վերը նշվածի՝ Ընկերությունը ներկայացրել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ին ուղղված 30.06.2020թ. ծանուցումը, որի համաձայն վերջինս հայտնել է հետևյալը. «Տեղեկացնում ենք Ձեզ, որ գույքի գնահատման հանձնաժողովի եզրակացության ուշացումը ամենայն հավանականությամբ կապված է եղել երկրում ստեղծված իրավիճակի՝ համաճարակի հետ: Վերոհիշյալով պայմանավորված՝ Ձեր 20.05.2020թ. դիմումի հիման վրա «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարանի հայտարարած «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58» ծածկագրով բաց մրցույթով պայմանագրի և որակավորման ապահովման նպատակով «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ին բանկային երաշխիքների քննարկման գործընթացը երկարաձգվել է»:

Այսպիսով՝ վերը նշված փաստերով պայմանավորված և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի 30.06.2020թ. ծանուցման համաձայն՝ «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ի կողմից ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58 ծածկագրով ընթացակարգի պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելը պայմանավորված է եղել Ընկերության կամքից անկախ հանգամանքներով, ուստի նման փաստական հանգամանքով պայմանավորված գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի

6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.06.2020թ. թիվ /26/9085-2020 գրությամբ «Դ.Ա.Ն. Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**